

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարւան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».

Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տ է Լ է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են

իւրաքանչիւր ըստին 2 կոպէկ.

Տ է Լ է Ք օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Հ ա ն գ ու ճ ա լ

ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՏԵՓԱՆԷԻ

յուզարկաւորութիւնը իր ընտանիքի (Եփրատի միջին, № 132) տեղի կունենայ
չաբաթ, նոյեմբերի 18-ին, 3 ժամին կէսօրից յետոյ դէպի Կուկիայի Թանգոյան ա.
Աստուածածնի եկեղեցին: Թաղումը տեղի կունենայ կիրակի, նոյեմբերի 19-ին, պա-
տարագից յետոյ, որ կը սկսվի առաւօտեան 10 ժամին, Վանքի տաճարի դաշտում, որի
մասին յայտնում են հանգուցեայի եղբայրները ազգականներին, բարեկամներին եւ
ծանօթներին: Ամբիօքը այսօր, երկուշաբթի 6 ժամին:

Նոյեմբերի 14-ին, երկուշաբթի 7 ժամին, վախճանվեց իշխանուհի

ԵԼԻՍԱԲԵՏԱ ՄԻՆԱՍԵԱՆ ԱՄԵՏՈՒՆԻ

(ծննդով իշխանուհի Ստեփաննայ), որի մասին նրա դուստր Նինա Բախալովնա Դո-
լոյանան իր ամուսնու եւ որդիների հետ յայտնում է ազգականներին եւ ծա-
նօթներին: Հոգեհանգիստ կատարվում է ամենայն օր հանգուցեայի ընտանիքում երե-
կոյան 6 ժամին, Միքայելեան փողոց № 123: Յուզարկաւորութիւնը կը սկսվի նոյեմ-
բերի 18-ին, առաւօտեան 10 ժամին, հանգուցեայի ընտանիքի դէպի Կուկիայի ա. Աս-
տուածածնի եկեղեցին, իսկ այնտեղից Չուգուրէթի գերեզմանատունը: 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նոյն հարցի մասին.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Մատենագրութիւն. Օպերային ներկայացում-
ները. Նամակ Գանձակից. Նամակ Խմբագրու-
թեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.
Հայկական տպագրութիւն.

ՆՈՅՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

«Մշակ» երէկվայ համարում խօսելով
լեռնադաշտերում գտնվող քաղաքների մա-
սին, մենք այն միտքը յայտնեցինք, որ նը-
րանք պէտք է իրանց զարգացման համար
մեծ ուշք դարձնեն արհեստների կատա-
րելագործութեան եւ նոր արդիւնագործու-
թիւն ստեղծելու վրա:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Այս գիտակցութիւնը այնքան արմատացաւ
ուսու ժողովրդի մէջ, որ շատերը սկսեցին նոյն
իսկ հաստատել թէ Մօսկվան երրորդ Հնոմ է:
Այդ բանը այսպէս էին փաստաբանում. Հնո-
մում չը կայ թագաւոր, եւ որպէս տիեզերա-
կան քրիստոնէութեան մայրաքաղաք նա կորց-
րել է իր նշանակութիւնը դեռ VIII դարից,
երբ արեւմտեան եւ արեւելեան եկեղեցիները
բաժանվեցան. երկրորդ կամ նոր Հնոմը, այ-
սինքն Կ. Պօլսը, թիւրքաց նուաճումից յետոյ
չէ կարող համարվել օրթօդօքսութեան գլուխ,
քանի որ այնտեղ այլ եւս չը կայ թագաւորա-
կան իշխանութիւն: Բիւզանդական սիստեմը
թագաւորական գահի եւ եկեղեցու միութիւնն
էր հաստատել եւ թագաւորին ճանաչում էր
եկեղեցու գլուխ: Յունական եկեղեցին ամբողջ
տիեզերքում ճանաչում էր մի հատ թագաւոր
եւ դա Կ. Պօլսի թագաւորն էր. մնացածները,
նրա կարծիքով, ընտելութեամբ են իւրացրել
թագաւորի տիտղոսը: Քանի կանգուն էր Բիւ-
զանդիայի կայսերական գահը, նոյն իսկ Ռու-
սաստանը եկեղեցական կողմից համարվում էր
Բիւզանդիայի կալուածք, եւ երբ ուսուց մեծ
լեւնանները մէկը փորձեց ազատել ուսուց
եկեղեցին այդպիսի կախումից, Կ. Պօլսի յոյն
պատրիարքը գրեց նրան. «Անկարելի է, որ
քրիստոնեաները ունենան եկեղեցի, բայց չու-
նենան թագաւոր, որովհետեւ թագաւորութիւ-
նը եւ եկեղեցին սերտ կերպով կապված են
իրար հետ եւ անհնարին է բաժանել նրանց

Մեր այդ քաղաքներում ազգաբնակու-
թեան մի մասը մինչեւ այժմ պարապված
է երկրագործութեամբ, բանջարաբուծու-
թեամբ եւ անասնապահութեամբ: Միւս
կողմից մի քանի գիւղեր, որոնք սակաւա-
հոգի են եւ չեն կարող գիւղատնտեսութեան
միջոցով ապահովել իրանց կենքը, սկսել
են պարապել արհեստներով, առևտուրով
եւ մասնաւոր աշխատանքով: Այդպիսի գիւ-
ղերի թիւը ժամանակով պէտք է աւելի
եւ աւելի մեծանայ, որովհետեւ հողը մը-
նում է նոյնը, իսկ ազգաբնակչութիւնը օ-
րէցօր աճում է:

Քաղաքները զարգացնելով եւ կատարե-
լագործելով արհեստները ոչ միայն կը
բարւոքեն իրանց ազգաբնակչութեան տըն-
տեսական վիճակը, այլեւ օրինակ կը դառ-
նան գիւղերի համար: Երբ արհեստները

իրարից *) Դա մի սկզբունք էր, որ գալիս էր
ժողովրդի ուսմանը այն ժամանակից, երբ
Կ. Պօլսում այլ եւս չը մնաց քրիստոնեայ թա-
գաւոր: Նշանակում էր, որ այնուհետեւ եկեղե-
ցին պիտի իր գլուխ ճանաչէր Մօսկվայի թա-
գաւորին: Թայտն է, որ մեծ իշխան Իվան III
ամուսնացաւ Սօֆիա Պալեոլոգի հետ, որ Կոն-
ստանտին XII-ի եղբոր աղջիկն էր եւ Բիւ-
զանդիայի կայսերական տան վերջին ժառանգը:
Այդ ամուսնութիւնը տեղի ունեցաւ քաղաքա-
կան նպատակով: Վենետիկի ծերակոյտը առա-
ջարկում էր այդ ամուսնութիւնը իբրեւ մի
միջոց ժողովրդական քրիստոնեական կայսրու-
թեան իրաւունքները. եւ Ռուսաստանում հէնց
այդպէս էլ ընդունվեց Սօֆիայի ամուսնութիւ-
նը, որից յետոյ ուսուց պետական նշանադրու-
մի հետ միացաւ բիւզանդական երեքգլխեան
արժիւր. ուսու եկեղեցին ստացաւ անկախու-
թիւն, իսկ ուսուց ծարը այդ եկեղեցու վե-
րաբերմամբ ընկեց բիւզանդական կայսրի տե-
ղը, այսինքն դարձաւ եկեղեցու գլուխ եւ ներ-
կայացուցիչ:

Այսքան ամուր էին այն կրօնական, քաղա-
քական եւ կուլտուրական կապերը, որոնք կա-
պում էին ուսման յոյնին հետ Ռուսների
մէջ ժողովրդականացած էր այն միտքը, թէ
իրանց է վերապահված ազատել օրթօդօքսու-
թիւնը իսլամի ծառայութիւնից եւ նորից քրիս-
տոնէական խաչ տնկել Սօֆիայի մզկիթի վրա:
Բայց եթէ յոյները միայն կրօնական կապերով
էին միացած Ռուսաստանի հետ, թիւրքաց տի-
րապետութեան տակ կային եւ այնպիսի ազ-
գեր, որոնց միացում էին հիւսիսային պետու-
թեան հետ բացի կրօնից նաեւ ցեղային ծա-
ղումը, լեզուն: Դրանք Բալկանեան Թերակղ-
զու պաւօն ազգերն էին Արեւմտեան հնդե-

*) Миллюковъ—«Очерки по истории русской куль-
туры», т. II, СПб. 1899, кр. 24—25.

մեծ ծաւալ կը ստանան եւ նրանց ար-
դիւնքերը այնքան կը մեծանան, որ կը
զերազանցեն տեղական պահանջները, այն
ժամանակ հարց կը ծագի այդ արդիւնք-
ների համար վաճառանոց գտնելու ու-
րիշ տեղերում: Եւ անկասկած, այսպիսի
վաճառանոց գտնելու համար անհրաժեշտ
է արհեստները հանել իրանց ներկայ ան-
կատար եւ տեղի վիճակից եւ դարձնել նրանց
կատարելագործված եւ վայելուչ:

Երբ որ քաղաքների կրթված եւ ձեռնը-
հաս ոյժերը իրանց բաղդը կը կապեն շըր-
ջապատող գիւղական ազգաբնակչութեան
բարօրութեան հետ, կը վերցնեն իրանց վրա
աւաք եղբոր եւ զեկամարողի պաշտօն եւ կը
բեղմնաւորեն իրանց աշակցութեամբ տեղա-
կան ազատ ձեռքերի աշխատանքը, այն
ժամանակ կը փոխվի մեր լեռնադաշտերի
ներկայ ամայի եւ տխուր պատկերը. գիւ-
ղատնտեսութիւնը կը վերցնի հողից այն
բոլոր օգուտը, որ նա կարող է տալ, իսկ
արհեստները հանդէս կը գան լրացնելու
այն պակասը, որ թողել է գիւղատնտե-
սութիւնը:

Առանց լուրջ կուլտուրական աշխատան-
քի, առանց կատարելագործութիւնների
չեն կարող առաջ գնալ լեռնադաշտերի ոչ
գիւղական եւ ոչ քաղաքային ազգաբնակու-
թիւնները: Թող մեր գաւառական քաղաք-
ները լուրջ կերպով մտածեն այդ հանգա-
մանքի մասին: Եւ թող մեր հարուստները
իրանց բարեգործութիւնը ուղղեն դէպի
մեր գաւառները, ուր այնքան թոյլ է եւ
մեռած նախաձեռնութեան ոգին եւ սուղ
են նիւթական միջոցները:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

I

«Տաղեր ու խաղեր», խմբ. Ե. Կապ. Աղէք. Միքիթարեան
260 էր., գինը 60 կոպ., Ալէքսանդրօպոլ 1900.

«Տաղեր ու խաղեր»-ի խմբագրողը եւ կազ-
մողը անուանել է իր գիրքը «հարուստ ժողո-

նասիրութիւնը ի նկատի ունէր միայն յոյնե-
րին, մինչդեռ Ռուսաստանը փրկիչ էր համար-
վում թէ յոյների եւ թէ եւրօպական Թիւր-
քիայի բոլոր միւս քրիստոնեայ ազգերի կող-
մից: Թէեւ Ռուսաստանը դեռ այնպիսի դրու-
թեան մէջ չէր, որ կարողանար չաչափելի գոր-
ծերով ցոյց տալ իր դաւանակից եւ ցեղակից
ազգերին իր կօշուքը, բայց պահպանում էր
նրանց հետ յարաբերութիւններ, վառ էր պա-
հում ճնշվածների յոյսերը ապագայի վերաբեր-
մամբ: Արդէն XVI դարի երկրորդ կէսում,
ինչպէս գրում էր Վենետիկի դեսպանը իր կա-
նաւարութեան, թիւրքաց սուլթանի կողմից վա-
խճանվում էին Ռուսաստանից, որովհետեւ Բօլ-
զարիայի, Սերբիայի, Բօսնիայի, Յունաստանի
ժողովուրդները պատրաստ էին գննել վերջին
եւ ապագամբնել թիւրքաց լուծը թօթափելու
եւ Մօսկվայի իշխանութեան հպատակվելու
համար *):

Ահա այս բոլոր հանգամանքները այնքան
ծանրակշիռ էին դարձնում Ռուսաստանի կո-
շուքն ու դերը արեւելեան հարցի լուծման մէջ,
որ Եւրօպայի սկսեց համոզմունք կազմել թէ
առանց Ռուսաստանի մասնակցութեան չէ կա-
րելի ազատել քրիստոնեաներին թիւրքաց լու-
ծից: Ինքը Եւրօպայի սկսեց ուսման ժողովրդի
արեւելեան գործերի մէջ, եւ ամեն անգամ,
երբ Արեւմուտքում ազատարար պատերազմի
միտք էր ծագում, Ռուսաստան էին ուղարկ-
վում դեսպանութիւններ, որոնք համոզում էին
Մօսկվայի տիրոջներին միանալ պատրաստվող
արշաւանքին եւ միասին կուռնել թիւրքիայի
դէմ:

Ինչպէս էր վերաբերվում թիւրքիան այն
լուսաբերին, որ գործ էր ընում քրիստոնեայ
աշխարհը նրա դէմ: Թիւրքաց սուլթաններին,
ի հարկէ, շատ լաւ յայտնի էր, որ Եւրօպայի

վաճու կրօնական տաղերի, շարականների, այլ
եւ այլ բանահիւտութեանց, ժողովրդական եր-
գերի եւ պարերգերի:

Այդ ժողովածուն ոչ միայն «հարուստ» է պ.
Աղէքսանդր Միքիթարեանի ասելով, այլ եւ
«անմահ արձան» ըլլաւ սիրասուն թոնիկ երեք
եւ կէս ամեայ Անուշ Գուրգէնին», որի միջա-
տակին նուիրված ստանաւորով է բանում նա
իր երգարանը:

Մենք յարգում ենք «խմբագրող պապիկի»
վիշտը, բայց ինչ բան ունի ընթերցող հասա-
րակութիւնը պ. Աղէքսանդր Միքիթարեանից
«երեք եւ կէս ամեայ», թէկուզ հրեշտակաման
թոնիկի հետ,—մի վիկտոր Հիւգօյի թոնիկով
հասարակութիւնը կարող է հետաքրքրվել,
բայց մի Աղէքսանդր Միքիթարեանից թոնի-
կով, ոչ Միքիթայե հասկանալի չէ ինքն ըստ
ինքեան, ինչպէս եւ այն, որ երգերի մի ժո-
ղովածու չէ կարող «անմահ արձան» լինել եւ,
որ, յամենայն դէպս, իրան՝ ժողովածու կազ-
մողին խօսք չի հասնի այդ հարցը վճռելու:
Վերջապէս, միքիթայե սէրը եւ վիշտը կարող են
իրաւունք տալ որ եւ մէկին աղաւաղել հա-
յոց լեզուն, գրելով՝ «Թէկուզ աշխարհը որ
տան գիտ», եւ աղծատել հայկական տաղա-
չափութիւնը 3 և 5 Տրեդեակօվսկի անդամահա-
տութեամբ:

Ինչպէս տեսնում էք, այդ փաստերը բա-
րեգուշակ չեն ժողովածուի գրական ար-
ժանաւորութիւնների նկատմամբ, եւ վերա-
ւի ժողովածուն ոչ այնքան «հարուստ» է,
որքան խառնուփնոր: Նիւթերի ընտրու-
թեան մէջ չէ երեւում ոչ սիստեմ, ոչ առաջ-
նորոգ դադափար, ոչ էլ ճաշակ: Խմբագրող
եւ կազմողը նոյն իսկ աւելորդ է համարել նը-
շանակել, թէ որ նիւթերն է նա արտատպել
եւ որը ինքը գրել առել, մինչդեռ հէնց այն
նիւթերումն է այդ ժողովածուի հետաքրքրու-
թիւնը, որ ինքը պ. Աղէքսանդր Միքիթա-
րեանցն է հաւաքել, որովհետեւ արդէն տպված-
ների ընտրութիւնը, ինչպէս ասացինք, կա-
տարված է անսխառն եւ անճաշակ:

Մանօթութիւններից էլ գրեթէ զուրկ է ժո-
ղովածուն, մինչդեռ ինքն է զանազան գաւա-

տնշանքն է Ասիա վերադարձնել օսմանցինե-
րին: Այդ բացարձակ իրողութիւնը նրանց առ-
ջեւ էր այն օրից, երբ Օսմանի դրօշակը ան-
ցաւ Եւրօպա եւ քրիստոնեայ ազգերի դիակ-
ների վրա հիմնեց զինուորական բռնապետու-
թիւն: Բայց սուլթանները ունէին ոչ միայն
ոյժ, այլ եւ հանձարեղ կանխատեսութիւն.
նրանք ըմբռնել էին, որ քրիստոնեայ ազգերը
չեն կարող մի հաւաքով միութիւն հանել օս-
մանցիների դէմ, նրանք հասկացել էին, որ
քաղաքական ձգտումները, դաւանական տար-
բերութիւնները միշտ մրցութիւն, նախանձ եւ
անհամաձայնութիւն կը ստեղծեն եւրօպայի-
ների մէջ Կ. Պօլսի նուաճումը միանգամայն
ապահովեցնում էր այդ դրութիւնը: Բիւզան-
դական հռչակաւոր մայրաքաղաքը ոչ միայն
տալիս էր օսմանցի նուաճողներին Եւրօպայի,
Ասիայի եւ Աֆրիկայի վրա տիրապետելու մի
գեղեցիկ դիրք, այլ եւ ստեղծում էր օսմա-
նեան գահի համար մի միջազգային կրկնակի
դրութիւն, որ ամեն տեսակ զօրքերից ու զէն-
քերից տասնապատիկ աւել ապահովութիւն էր
իրեն գոյութիւն պահպանելու միջոց: Արեւ-
ելեան հարցը Կ. Պօլսի անկումից յետոյ ստա-
ցաւ այն կերպարանքը, ինչ ունի եւ այժմ:
«Ամեն մի խաչակիր դաշնակցութեան բոլոր
մասնակցողները—ասում է Գերվինուս *)—
պատրաստ էին պահանջել իրանց բաժին որսը
եւ երեք չէին համաձայնվի տալ իրանցից
մէկին գլխաւոր բաժինը: Իսկ գլխաւոր բա-
ժինը Կ. Պօլսն էր, Համաձայնութիւն կարող
էր կայանալ Թիւրքիայի այս կամ այն կողմի
վերաբերմամբ, բայց թէ ինչ պէտք է անել Կ.
Պօլսը—այդ մասին լուծում էր Պիոս II պապը
Մենտուայի ժողովում, ինչպէս XIX դարի
սկզբում Նապոլէօն I, դաշնակցութիւն առա-
ջարկելով Ալէքսանդր կայսրին, ոչինչ չասաց,
*) T. V, կր. 19:

*) Жигарева, т. I, кр. 69:

Типографія Грузинск. Т—ва, Большая-Валовская ул., № 27.